Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 6-ի N 475-Ն որոշման

«Աղյուսակ N 1

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ԼՃԻ ԱՓԻՑ ՈՐՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

| **NN ը/կ** | **Ձկան տեսակը** | **Ձկնորսության թույլատրելի առավել քանակությունը (տոննա)** | **Ձկնորսության համար թույլատրելի քաշը և արդյունագործական չափը (ծնոտից մինչև պոչային լողակի կտրվածքը) միավորի համար (գրամ/սանտիմետր)** | **Նախաձվադրային-ձվադրման ժամանակահատվածը** |
|---|---|---|---|---|
| 1. | Սիգ | 300 | 400/30 ոչ պակաս | նոյեմբերի 15-հունվարի 20 |
| 2. | 2023 թվականի համար Սևանա լճում կարաս և խեցգետին կենդանատեսակների համար արդյունագործական որսի չափաքանակ չի սահմանվել: | | | |
| **Ընդհանուր պահանջներ** | | | | |
| 3. | Սիգի որսն իրականացվում է Սևանա լճի ամբողջ տարածքով, ափից առնվազն 500 մ հեռավորության վրա: | | | |
| 4. | Սիգի արդյունագործական որսն իրականացվում է սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային մանրաթելերից մեքենայական կամ ձեռքի միջոցով արտադրված հանգուցային ձկնորսական դնովի ուռկաններով (ցանցերով), որոնց թելի տրամագիծը 0.5 մմ-ից ավելի է, իսկ ցանցավանդակի չափը 80 մմ-ից ավելի (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ-ից ավելի): | | | |
| 5. | Սևանա լճում կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետ սահմանել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը: | | | |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ